ՆՈՐ-ԴԱՐ

№ 135 ՔՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ Չարաթ, 2 Օգոստոսի, 1903 Չարաթ, 2 Օգոստոսի, ՔՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 135

Տարին 10 րուբ. վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը 3 ր. 50 կ. ամիսը՝ (Թիֆլիսում) 1ր., հասով 5 կ. Բաժանորդ կն գրւում մխիթյան խմբագրատանը՝ Դաւիդով.փողց, № 5.

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis, Rédaction «Nor-Dar»

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի ուրբաթ օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով Յայտարարութիւնների բաժին 2 կ., բեկլամների համար կրկնապատիկ։

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԻՆՉԵՒ ԿԵԱՆՔԻ ՎԵՐՋԸ

ԱՅՆ ԴԺԲԱՂԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ,

ՈՐՈՆՔ ՊԱՏԱՀՈՒՄ ԵՆ ԵՐԿԱԹՈՒԼԻՆԵՐԻ ԵՒ ԾՈՎԵՆԱ-ԽԵՐԻ ՎՐԱՅ

կատարւում է «Ռոսսիա» Ընկերութեան Վարչութեան մէջ (С.-Петербургъ, Морская, 37) Ընկերութեան Թիֆլիսի բաժանմունքում (Сергіевская ул., № 6) և բոլոր գործակալների մօտ Կայսրութեան քաղաքներում։

(197) 6—4

Տիկին Վառվառէ Թարխանեան իւր որդւոց հետ, խորին վշտով համակուած, յայտնում են ծանօթներին և ազգականներին՝ առաջինը իր թանկագին ամուսնու, իսկ երկրորդները՝ իրանց սիրեցեալ հօր՝

ԱՂԷՔՍԱՆԴՐ ԹԱՐԽԱՆԵԱՆԻ

եղերական մահը, որ տեղի ունեցաւ Բաքւում, յուլիսի 29-ին։ Յուղհանգիստը կրկատարուի շաբաթ՝ օգոստոսի 2-ին, երեկոյեան 7 ժամին, Վանայ մայր եկեղեցում, իսկ յուղարկաւորութիւնը նոյն եկեղեցւոյ գէպի Խոջիվանքի գերեզմանատունն կիրակի, օգոստ. 3-ին, առաւօտեան $10^1/_2$ ժամին

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.—Դիտողութիւններ։
Տ. Տ. Մելքիսեդեկ սրբազան։
Քրոնիկոն.—Լուրեր։
Մեզ գրում են.—Ղուշուց, Բերդուսեց։
Մի յեզաչրջում հայոց տառերի գիւտի պատմութեան մէջ։
Կ. Պոլսի հայ թերթերից։
Քաղաքական. — Ապստամբութիւն Մակեդոնիայում։ Փրանս Անգլիական մերձեցումը. Վատիկանում։ Ռոմպոլլայի պարտութիւնը։
«Նոր-Դար»-ի հեռագրներ։
Բանասիրական.—Սիրոյ զուսան։
Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 1 օգոստոսի 1903 թ.

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Ոչքան էլ առօրեայ կեանքը նման ու մի օրինակ երևի իւր ընդհանուր գծերի մէջ, այնուամենայնիւ ամեն մի անհատ նրա մէջ ունի իւր ուրոյն տեղը, իւր սեփական ասելու եղանակը, իւր դիմած նպատակակէտը, ուրիշ իսօքով, իւր կեանքի իդէալը, առանց որի առաջինը կորցնում է իւր ամբողջ նշանակութիւնն ու հրապոյրը և դառնում է աւելորդ բեռ անտանելի մի ծանրութիւն անհատի համար։

Չամաբերա որքան մարդկային անհատ, նոյնքան առանձին, առանձին բնաւորութիւններ։ Մրցքի զարգացումը, հասկացողութեան աոտիճանը, ձգտումները, շահերի տարբերութիւնը, կեանքի նպատակի ըմբռնումը, և այլն, ահագին տարբերութիւններ են առաջ բերում մարդկանց մէջ։ Իւրաքանչիւր անհատ մի-մի առանձին աշխարհ, մի-մի փոքրիկ ուրոյն պետութիւն է ներկայացնում ինքն իւր մէջ, կրելով իւր վրայ անհատի սեփական դրոշմը։

Մարդկային բնութիւնից և իմացականութեան աստիճանից անմիջականապէս բղխող կեանքի այս ալազանութեան մէջ, շատ անգամ միմեանց հակառակող բազմաթեակ հոսանքների ներկայութեամբ անհատը շատ դիւրութեամբ կարող էր իւր յենակէտը կորցնել, իւր սովորական ուղղութիւնից խոտորիլ, եթէ նա չունենար իւր ներքին աշխարհահայեացքը, իւր կէտ նպատակին։ Անհատի ընտրած նպատակն և իդէալն է, որը կառավարում է նրա ամբողջ գործունէութիւնը, ուղղութիւն տալիս նրան և նրա բոլոր քայլերը յարմարեցնում խնամքով փայփայուած իդէալի պահանջներին։

Վերցրէք անհատի միջից՝ նրա կեանքի նպատակը կազմող հեռաւոր ձգտումը, նրա իդէալը,—անհատը կկորցնի կեանքի հոսանքում իւր դիմադրական ընդունակութիւնը բնորոշ գոյնն ու ինքնուրոյնութիւնը, նա կդառնայ տկար և կամքից զուրկ մի էակ, ինչպէս մի առանց զեկի մակոյկ ալեկոծեալ ծովում, խորտակուելու պատապարտուած։

Կեանքի մէջ մարդկանց զեկավարող իդէալներին զուգընթաց ահագին նշանակութիւն ունեն մի շարք զգացումներ, գաղերի ընթացքում մարդկանց մէջ արմատացած ինչ-ինչ սովորութիւններ, որոնք, մի կողմից սրսչելով ու սահմանաւորելով նրա ընթացքի ճանապարհը, յարդարելով նրա դնացքը, միւս կողմից անհատներին կապում ու միացնում են ընդհանուր չափերով ու ձգտումներով։

Այդպիսի կապեր հանդիպանում են անհատի գործածած լեզուն, նուիրական համազմունքը, ժամանակի ընթացքում սրբագործուած սովորութիւնները, և այլն, որոնք անխախտ պահելով իրենց գոյութիւնը, դարձել են նրա համար կեանքի կռուան, հասարակութեան հիմնաքար, միակ պայման նրա գոյութեան։ Անհատներին միմեանց մօտեցնող, իրարու հետ կապող այդ ընդհանուր զգացումները յատուկ են բոլոր ժողովրդներին, զարգացման ու քաղաքակրթութեան ինչ աստիճանի վրայ էլ որ կանգնած լինեն նրանք։ Սակայն, այդ զգացումները այնքան աւելի խոր, յամառ, ու անյողդողդ բնաւորութիւն են ստանում, որքան անհատը հոգեպէս ու մտաւորապէս բարձր է կանգնած, որքան մշակուած ու ընդլայնուած է նրա ներքին աշխարհը։ Զարգացման բոլոր աստիճանների վրայ այդ կարգի զգացումներն ու սովորութիւնները ճակատագրական նշանակութիւն ունեն անհատի կեանքի ընթացքի, նրա գործունէութեան վերաբերութեամբ։ Դրանք իշխում են նրա բոլոր շարժումների վրայ, առաջնորդում են նրան դէպի յառաջ և մեծ օյժ ներշնչում կռուելու կեանքում յայտնուող խոչնդոտների դէմ։

Եթէ մենք հետևելու լինինք Եւրոպայի քաղաքակրթութեան պատմութեան, մենք կընկատենք, որ բոլոր կառավարութիւնները երեսից զպրոցական և այլ լուսաւորութիւն տարածելու համար պոլիտիկան ունեցող հասատատութիւններով անհատների և հասարակութիւնների մէջ զարգացնում են բարոյական բարիքների պիտակցութիւնը և դրանց պահպանելու միջոցները։

Նիւթական բարիքների հետ զուգընթացարար զարգանում է լուսաւորուող ժողովրդների մէջ բարոյական բարիքների պիտակցութիւնը և այս վերջին բարիքները միշտ գերագասելի են և աւելի թանկ են բարձր կուլտուրայի աստիճանին հասած անհատների և հասարակութիւնների համար։

Մենք տեսնում ենք, որ մի պետութիւն, մի ազգ իւր նիւթական բարիքները զոհելով պաշտպանում է մի ուրիշ անօգնական ազգի բարոյական բարձր բարիքները։ Բուլղարների, յոյների, սերբերի համար ամենից թանկ բարիքը իրենց անձնական և ազգային, ազատութիւնն հայրենիքի վերութիւնն էր և նրանց փրկեց Ռուսիան, վրկեցին նրանց եւրոպական մեծ տէրութիւնները։

Անտարակոյս այդպես հաստատւում է այն միտքը որ, մարդկանց համար բացի նիւթական բարիքներից կան և նիւթականից աւելի բարձր և աւելի թանկ բարիքներ, և թէ այդ միտքը աւելի զարգանում, աւելի հաստատ արմատներ է ձգում աւելի լուսաւորուած երկրներում, աւելի զարգացած հասարակութիւնների մէջ։

Տ. Տ. ՄԵԼՔԻՍԵԴԵԿ ՍՐԲԱԶԱՆ.

—

Հազիւ թէ մեր եկեղեցականների մէջ գտնուի ուրիշ մէկն այն աստիճան ազնիւ, այն աստիճան պատկառելի ու հեղինակաւոր, որպիսին էր նոր ի Տէր հանգուցեալ Մելքիսեդեկ արքեպիսկոպոսը—այդ տիպար բարձր հոգևորականը, որի թաղման շիրմի առաջ պէտք է, որ խորին ակնածութեամբ ծունկ խոնարհուեն նոյն իսկ իւր թշնամիները։

Ծաւ ի սիրտ մենք ստիպուած ենք բաւականանալ լոկ չոր ու ցամաք կենսագրական տեղեկութիւններով այդ մեծ հոգևոր հովուի մասին, որը իւր երիտասարդական եռանդ գործունէութիւնը սկսեց ռուսահայոց մէջ և պատկառելի ծերութիւնը կնքեց Թբղատայոց մէջ, այդպիսով մի կենդանի կապ հաստատելով հայ ազգի երկու հատուածների միջև.—այն ազգի, որին նա սիրում էր և որին նուիրուած էր իւր հոգու ամբողջ կարողութեամբ։

Նրանք, որոնք կկամենան ճիշտ գաղափար կազմել այս հոգևորական գործչի և հոգևորականի մասին, թող թերթեն «Նոր-Դար»-ի 1884 թուականի համարները, ուր մի ու մի տեղեկութիւններ կգտնեն բազմաթիւ առաջնորդողների մէջ. իսկ առ այժմ ինչպէս ասացինք, մենք ստիպուած ենք բաւականանալ հաղորդելով նրա չոր ու ցամաք և խիստ համառօտ կենսագրութիւնը, որը քաղում ենք «Սուրհանդակ»-ից։

Հանգուցեալ Տ. Մելքիսեդեկ Սրբազան ընիկ ռուսահայ ծնած է Սիւնեաց Տաուշ գիւղը, 1836 Նոյեմբեր 24 ին։ Իր նախնական կրթութիւնը րստացած է Սանահնի վանքին մէջ և 1849-ին Ներսիսեան դպրանոցը մտած է ուր լրացուցած է իր ուսումը Ներսէս Կաթուղիկոսի օրով, և աշակերտած է Պետրոս Ջանչեանցին։ Իր դպրոցական ընթացքը աւարտելէ յետոյ գացած է Ղուշի և հոն պաշտօնավարեր է արդիւնաւոր կերպով։ 1865-ին Պոլիս է եկել և այդ թուականին Գ. Դարեգին (աշխարհականութեան անունը) Մուրատեան իր զարգացմամբ և լուրջ երևոյթով գնահատած է։ 1866-ին երբ հանգուցեալ Տ. Գէորգ կաթուղիկոս Պոլիս կը գրաւէր, կը փափաքի հոգեւորական ձեռնադրուիլ, բայց Ն. Սրբազնութիւնը խորհուրդ կուտայ իրեն վանք մը մըտնել, հետևաբար նոյն տարին կ'ուղևորի Երուսաղէմ, ուր իբրև Սիօնի խմբագրապահ, իբրև վարժարանի տեսուչ և իբրև ուսուցիչ մեծ արդիւնքներ ունի։ 1869-ին վարդապետ ձեռնադրուած է և նոյն տարին Պոլիս գալով, առաջին անգամ ըլլալով իբրև եկեղեցական հրատիրակ է անդամակցութեան ուսումն. Խորհրդոյ Տ. Մելքիսեդեկ Վ. կարճ ժամանակ մը վերջ Երուսաղէմ դառնալէ յետոյ, 1870 ին գարձեալ Պոլիս եկած և իբրև նուիրակ Երուսաղէմի՝ ամբողջ Եւրոպա պտտած է, պատուաբեր կերպով կատարելով իր պաշտօնը. իր տպաւորութիւններէն բաւական բան մը հրատարակած է։ Այս նուիրակութենէն Երուսաղէմ դառնալէ յետոյ, վանական ներքին գործի մը համար վշտանալով, հրաժարած և Պոլիս գալով քարոզչապաշտօններ վարած է։ Ուր ուրեմն 1877-ին Զմիւռնիոյ առաջնորդ ընտրուած է և 1879 ին եպիսկոպոս ձեռնադրուած է նոյն Վիճակին վրայ։

Հանգուցեալ Սրբազանին կեանքին ամենակարևոր մէկ պարագան 1884-ին հանգուցեալ Ներսէս Սրբազանին հետ կաթողիկոսական քանիսիա և առաջին ընտրելոյն հրաժարումէն յետոյ 1885-ին կատարուած ընտրութեամբ իբրև Մայր Աթոռոյ Կաթողիկոս մեծամասնութեան քուէն չհաւած ըլլալէ *) սակայն ինչպէս յայտնի է, հանգուցեալ Հարը՝ Ալեքսանդր Գ. երկրորդ ընտրեցին՝ Տ. Մակար Սրբազանը վանքապետ։ Այս պարագան խորապէս ազդած էր Տ. Մելքիսեդեկ Սրբազանին վրայ, այնպէս որ այդ թուականէն ի վեր բարոյապէս ընկճուած և անմխիթար երևոյթ մը ունէր։ 1888 թուականին հրաժարելով Զմիւռնիոյ առաջնորդութենէն եկաւ Պոլիս և առանձնացաւ Գըզըլ Թօբրագ. սակայն ծանօթ ազգայիններէ սմանց կողմէ հրաւիրուեցաւ Գաղգիպոլի քարոզչութեան, պաշտօն զոր վարեց 10 տարի, այդ միջոցին պարապելով գրական աշխատութեամբ և բաւական տեն գասախօսելով Գեղոնական վարժարանի մէջ։ 1896 ին պահ մը անդամակցեցաւ նաև ազգային ընտրուած սրդի վարչութեան Կրօն. Ժողովոյ ալ անդամ ընտրուեցաւ, սակայն հրաժարեցաւ, ինչպէս հրաժարած էր անկէ առաջ իբրև առաջնորդուած ուրիշ ընտրելութիւններէ, ի մէջ այլոց Սուրբ Կաթողիկոսական ընտրելութենէ։ 1898-ին վերստին ընտրուեցաւ Զմիւռնիոյ առաջնորդ և տեղացիներու ատիպման վրայ ընդունեց այս պաշտօնը, որուն համար զղջացած էր, ինչպէս կ'ըսէր յաճախ. սակայն հինգ տարի իր ժողովրդեան օգտակար ըլլալու բաղձանօք աշխատելէ ետքը, կնքեց իր կեանքը ամէնուն սէրը և յարգանքը տանելովիրեն հետ։ Անհատական այս համառօտութիւնը հանգուցեալին կենսագրութեան, օրուն կարևոր պարագաներուն վրայ առանձինն պիտի գրենք։ Վախճանեալը իբրև գրական դէմք մը անուն մը ունէր, իր մայրենի լեզուէն զատ, զոր շատ գեղեցիկ կը գրէր, հմուտ էր նաև Ֆրանսերէնի, Ռուսերէնի և Գերմաներէնի. հեղինակած է պատմութիւն Հայ. Եկեղեցւոյ, ընդհ. Քրիստոնեայ եկեղեցեաց պատմութիւն, Հին Կաթոլիկոսի պատմութիւն, Կենսագրութիւն Պետրոսի Ջանչեանցի, ելն. (Ցերոյենցի դէմ) մի խօսք, երկու խօսք, Պատասխանի Լէոն Ժ-ի կոնդա-

*) Ինչպէս յայտնի է 1885ի թ. ընտրութեան ժամանակ Ս. Մելքիսեդեկ ընտրեցաւ միաձայն։ Խմբ.

ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՀԱՐՑԸ

Ս. Ղրիմեանի Ղբայր ի Քոյր պատմուածքին առթիւ

Հոգեառ գրութիւնը ունի Ս. Ղրիմեան իր ընթերցողներուն, որոնք կը սիրեն զինք իրենց սրտի ամբողջ ջերմութեամբ։ Ինչպէս միշտ, այնպէս ալ այս անգամ հեղինակը կ՚ուզէ մեզ ներկայացնել հարց մը, որ ամէն օր կը ծագի մեր առջեւ, կը տանջէ մեզ, կը ստիպէ մեզ մտածել, բայց որուն լուծումը մենք չենք գտներ։ Ս. Ղրիմեան կ՚ուզէ մեզ ցոյց տալ, թէ ինչպէ՞ս կրնայ ազգասէր մարդ մը, որ իր ամբողջ կեանքը նուիրած է ազգին, ինչպէ՞ս կրնայ ան ապրիլ ազգին մէջ, որ ոչ միայն չի գնահատեր զինք, այլ կը հալածէ զինք։ Ինչպէ՞ս կրնայ ան ապրիլ ազգին մէջ, որ ոչ միայն չի գնահատեր զինք, այլ կը հալածէ զինք։

Ղրիմեան կը ներկայացնէ մեզ Արեւմտահայ մտաւորականի մը տիպարը, որ ամբողջ կեանքը նուիրած է ազգին, որ ամբողջ կեանքը ապրած է ազգին մէջ, որ ամբողջ կեանքը ապրած է ազգին մէջ։ Ան ունի ընտանիք, ունի զաւակներ, ունի կին, որ կը սիրէ զինք, կը գնահատէ զինք, կը հպարտանայ զինք։ Ան ունի նաեւ ընկերներ, որոնք կը սիրեն զինք, կը գնահատեն զինք, կը հպարտանան զինք։ Ան ունի նաեւ ազգ մը, որ կը սիրէ զինք, կը գնահատէ զինք, կը հպարտանայ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

— Ինչպե՞ս կարելի է հայերի ազգային ոգին զարթեցնել, ինչպե՞ս կարելի է հայերի մեջ ազգային գիտակցություն ներշնչել, ինչպե՞ս կարելի է հայերի մեջ ազգային ինքնագիտակցություն զարգացնել, ինչպե՞ս կարելի է հայերի մեջ ազգային ինքնավստահություն ներշնչել, ինչպե՞ս կարելի է հայերի մեջ ազգային ինքնավստահ

անդամների թիւը լրացրել են բուլղարական գիւղական բնակչութիւնից կազմուած հրոսակախմբերից։ Մի քանի գիւղերում հետացել են միասին կանայք և երեխաները։

Չինուորական և ժանդարմական փոքրիկ պահակախմբերը ենթարկւում են բանի գործողութիւններին։

Տեղական մահմեդական բնակչութեան տրամադրութիւնը, որը ճնշուած էր, նորից վառուել է, տեսնելով, որ օգնական զօրքեր են եկել, և նա ղէնք է պահանջում։

Դուռը յոյս ունի, որ կոմիտեների կոմունակիցների վերին աստիճանի յարուած այժերը թուլանալու վրայ են։

Հետագրական հաղորդակցութիւնը Մոնաստիրի և Սկյանիկի միջև նորից ընդհատուած է։

Սմիլնի Գրուչհոլի մէջև տեղի ունեցած բնդհարումների ժամանակ երկու կոմի կորուստներն էլ կազմում են մօտաւորապէս 60 հոգի։

ՊԱՐԻԶ. — Քաղաքային երկաթուղու վրայ պատահած գժրախտութեան առթիւ անգլիական թագաւորը Լուբէին ցաւակցական հեռագիր է ուղարկել։

ԼՈՆԴՈՆ. — Պաշտօնական լրագրի մէջ տպուած է մի կարգադրութիւն այն մասին, որ օգոստոսի 1-ից (ն. ս.) արգելուած է չաքարի ներմուծումը Դանիայից, Ռուսիացից և Արգենտինայից, բացի չաքարի դիրտից և չաքարով քաղցրացրած մթերքներից։ Այս կարգադրութիւնը չի վերաբերում արանդիտով եկող չաքարին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Արտաքսման լրագրները հաղորդել էին, թէ սուլթանը դրամական մի խոշոր գումար է յատկացրել սպանուած հիւպատոս Ռոստկովսկու ընտանիքի ապահովութեան համար։ Հաւաստի աղբիւրից մենք տեղեկացանք, որ տիկ. Ռոստկովսկայան մերժել է իրեն նշանակուած դրամական օգնութիւնը, յայտնելով սուլթանի կողմից իւր մօտ ուղարկուած հիմիիրաշային, որ այդ առաջարկը խորապէս վրդովեցնում է իրեն։

Կ. ՊՈԼԻՍ.—Մոնաստիրի վալի Ռիդա-փաշան, ժանդարմների գլխաւորը, նմանապէս և ժանդարմական սրիչ սպաները արձակուած են պաշտօնից։

ՎԵՆՆԱ.—Կայսր Ֆրանց-Իոզիֆն այսօր ժամանեց։

ԲԵՐԼԻՆ. — Վիլհելմ կայսրը վերադարձաւ հիւսիսում կատարած իւր ճանապարհորդութիւնից։

ԲԵԼԳՐԱԴ. — Այսօր բանակցութիւն ներ են տեղի ունենում կանոկում մի նիստական ճգնաժամի առթիւ։

ՍՈՖԻԱ. — Հաղորդակցութիւնը Սկլանիկի և Ուսքիւբի միջև նորից ընդհատուած է Կիսկելի մօտ կամուրջը քանդուած լինելու պատճառով։

Բալղար բնակչութիւնը միանում է ապստամբների հետ։

Սկսեան մօտ ապստամբները կռում են երեք օր չարունակ։

Հիլմի-փաշան հրամայել է, բուլղարական հրոսակախմբերի դէմ կանչել ալբանական զօրքերը, ապստամբներին պարտադրանքներ համարելով։

Մի քանի բազարներ և գիւղեր չարունակում են մնալ ապստամբների ձեռքին։

ԲՈՒԿՈՎԻՆԱ-ԱՅՐԵՍ. — Երեկ Մոնտեվիդէում երկրաշարժ եղաւ։ Քարուքանդ են եղած բազմաթիւ տներ և Ս. Ֆրանցիսկի եկեղեցու գանգակատունը։ Հինգ հոգի սպանուած է և չատերը վիրաւորուած են։

ՎԵՆՆԱ.— Արտաքին գործերի մինիստրութիւնը դեսպան Էրենտալին յանձնարարեց Աւստրիա-Ունգարիայի անկեղծ ցաւակցութիւնը յայտնելու Գրաֆ Լամզդորֆին Ռոստկովսկու սպանման առթիւ։

Կ. ՊՈԼԻՍ. — Հիւպատոս Ռոստկովսկու սպանման առթիւ սուլթանը դիմել թագաւոր Կայսրին մի հեռագրով, որի մէջ ամենախորին ցաւ է յայտնում և հաւատացնում է, որ ամեն բան, ինչ որ կարող է պահանջուել պղուանքի արժանի այդպիսի մի ոճիր պատժելու համար կկատարուի։

Օգոստոսի 1-ից

Կ. ՊՈԼԻՍ.—Ենթադրւում է, որ Բոսկովսկու սպանութիւնը պժրապղութեան արդիւնք է։

ԲԵԼԳՐԱԴ.—Հաւատացնում են, որ նոր կազմուելիք կաբինետի մէջ փոխարքութիւն պէտք է տեղի ունենան միսիայի արդարադատութեան օտար պատասխանութիւնների և ֆինանսական մինիստրութիւնների մէջ։

ԲԵԼԳՐԱԴ. — Մինիստրական ճգնաժամը դեռ հաւ չէ վերջացել։ Հաւանական է որ Աւակումովիչի կաբինետը վերահաստատուի։ Ճգնաժամի իսկական պատճառն է մինիստրներից ոմանց մերժումը պատերազմական գործերի մինիստրութեան կողմից առաջարկուած լրացուցիչ վարկին համաձայնութիւն տալու նկատմամբ։

ԼՈՆ.—Տեղս ժամանեց իշխան Օռլովսկին և մեկնելու է դէպի Ռամաշով և շրջակայքը՝ հեղեղումներից վնասուած վայրերը այցելելու համար. Արկածուածներին նպաստ պէտք է տրուի. Նորին Կայսերական Մեծութեան նուիրած գումարներից։ Ամեն տեղ ժողովուրդը իշխանին ջերմաւորում է ուրախութեամբ ու աղ ու հացով։

ՍՈՖԻԱ. — Մինիստր-նախագահը և ներքին գործերի մինիստրը մեկնեցին Դուբնից, որպէս զի կարողանան իշխանութիւններին անձամբ տալ հրահանգներ ոռմմանների վրայ հսկելու վերաբերմամբ։ Դուբնիցում ոստիկանութիւնը ձերբակալել է գնդապետ Ցոնչեին, որը պատրաստւում էր մահկանական սահմանն անցնել։ Հաստատում են, որ Գևչելիի մօտ գտնուած կամուրջը սասակ ընդհարումից յետոյ աւերուած է։ Հաստատ է Սկլանիկի և Ուսքիւբի միջև հաղորդակցութիւնը ընդհատուած է։ Թուրքերը վախճանական Գոպէշ գիւղը քարուքանդ են արել։ Ապստամբների գրաւած տեղը ներկայացնում է մի քառանկիւնի Օլթիդային, Բնսեային, Կիշևոլը և Գրուչևոյը միջև։ Վերջին երկու քաղաքներն ապստամբների ձեռքն է։ Թուրքական զօրքերի թափած չանքերը Վարդարի և Օլթիդիայի լճի միջև ընած տարածութիւնը գրաւելու վերաբերմամբ ապարդիւն են անցնում։

ՄԱՐԻՆԵԱՏ.—Երեկոյեան տեղս հասաւ Էդուարդ թագաւորը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—«Правит. Вѣстн.»-ում հաղորդուած է, որ «Гражданинъ» լրագիրը նզած է ուսական ազգաբարբարոսութիւնը։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Թրքական ծովային մինիստր, նորերս գաղտնաւած Հուսէյն-փաշան մեծ ժողովրդականութիւն ունէր ոչ միայն բերթ ծովային գործերին հմուտ մարդ, այլ իբրև ամենամեծ հաբեմի և ամենագեղեցիկ հարճերի տիրապետող։ Հուսէյն-փաշան չէր հետեւում իրենց թրքական հին խստութիւններին պահելովհարճերին մի հարեմում. Նա տեղաւորել էր հարճերին առանձին տներում, որոնց միապետն է հարկէ ինքն էր։ Գեղմանական թերթերի տալով, Հուսէյն փաշան ոչ մի ժամանակ ծովը չէր դուրս գալիս, այլ նայում էր նաւերին հեռուից։ Թրքական նաւատորմիղը, որը շատ տաբլոներ կառավարում էր Հուսէյն փաշան, շատ աննախանձելի վիճակի մէջ է և կարօտ հիմնական նորոգութեան։ Թուրքաց սուլթանը Հուսէյն-փաշայի տեղ ծովային մինիստրութեան գլուխ կարգելով ժողովրդական լուսաւորութեան մինիստրին, ուզեց ցոյց տալ, թէ ինքն էլ խոստովանում է, որ հարկաւոր է թրքական նաւատորմիղը հիմնովին նորոգել, սկսելով ապագայ ծովակալներ ուսումնարանի առաջին նստարանի պատրաստութիւնից։

Խմբագիր՝ հրատարակիչ
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆՈՒԻՐԻՆ քրտինքը եւ երա հոտը ծծում է կնշանակէ ոչընչացնում է

չուտով և հիմնովին ոտներից, ձեռներից, կռան տակից, այտուից մասից, պահպանում է հագուստը, ոտնամանները փչանալուց, ոտներն եփուելուց և զովացնում է գլուխը դանդից հոտ ունեցող և անպայման անվնաս

ԴԵՂ. ԿՈՎԱԼՍԿՈՒ
«ՍՈՓՈՐԻՆ»
դեղը թիթեղեայ արկղիկներում սէջ, որոնց երեսին դեղը ցանկալու համար մատնի վրայ գուլպաների և ձեռնոցների մէջ։ Գինը 30, 50 և 90 կ., 2 արկղիկը (30 և 5 կ.) ուղարկւում է առանց կանխավճարի վերադրի 1 ր. վճարով։ Գլխաւոր պահեստը Ապ. Կովալսկու դեղատան մէջ Վարշաւում, Գրանիչնայա 10. խնդրում ենք պահանջելդ դեղատներում և դեղատնային և պարֆիւմերի մագազիններում։ «Սուզորինի» գերազանց ներգործման և անվնասակարութեան համար ֆիրման երաշխաւորում է։

M. 22429. 12—8

Ե դեղը վաճառելու թոյլ է տրուած Վարշաւական վարչութեան կողմից առաջիկայ հանուր հիմունքներով։

ԵՍ ԱՆՆԱՆ ՀԻԼԼԵՍԳ

աճեցրել եմ իմ անուանի երկայն (185 սանտիմետր երկայնութեամբ) մազերը, որոնք յիշեցնում են օրհնեալի մազերը,—ընտրեալ տասնեակն Յանեկիի 14 տասուչ գործածս թեան։ Այս օծանելիքը ճանաչուած է իրրև մազերը թափուելու դէմ լաւ միջոց, որը միևնոյն ժամանակ նպաստ տում մազերի աճմանը և նրանց արմատները պնդացնում. այս օծանելիքի շնորհիւ տղամարդու մուրքը խիստ առոյգ կերպով աճում է, նմանապէս (մինչև անդամ կարճատև գործածութենից յետոյ) գլխի և մարմնի մազերը բնական փայլ են ընտանում. ընդամին օծանելիքս մազերը պահպանում է վաղաժամ սպիտակելուց ձեր հասակում։

ՄԻ ԲԱՆԿԱՑԻ ԳԻՆԸ

3, 5 եւ 8 rուբլի

Հասանելիք փոքը ստացուած ժամանակ ուղարկում է պատուիրատուին։ Ամեն օր աշխարհիս ամեն կողմերը ուղղակի գործարանից. որը և պիտի ուշադրութիւն դարձնեն բոլոր ապագրանքները։

ANNA CSILLAG
Wien I
Graben 14 52—20

ՍՈՎՈՐԱԿԱՆ ԱՌՕՐԵՑ ԼՐԱՑՈՒՄ
փոքը քանակութիւններով
ԳԵՄԱՏՈԳԵՆ ԲՓ. ԳՈՄՄԷԼԻ
ԱՐԴԵՆ ՀԱՍԱԿԻ ԵՐԵԽԱՆՑ ԵՒ ՏԱՐԻՔՈՑ ՄԱՐԴԿԱՆՑ
ախորժակն արագօրեն բաց է անում, դիժերն արագօրեն բարձրացնում, նեարդային սիստեմն ամրացնում։
ԿԱՑ ԲՈԼՈՐ ԴԵՂԱՏՆԵՐՈՒՄ և գեղատնային ապրանքների խանութներում։ Թիֆլիսում՝ կովկասեան բնակութեան ապրանքների խանութում։ Զգուշացէք կեղծումներից։ Պահանջեցէք անպատճառ «ՓԲՓ. ԳՈՄՄԷԼԻ» գեմատոգինը։ Բոլոր երկրների բժիշկները նպաստաւոր և փառաւոր կարծիքներ են յայտնել։ 82—3 M 4347912

Всякій
можетъ заработать легко и честно до 400 руб. мѣсячно, безъ особыхъ знаній, и расходовъ. Посылайте только скорѣй Вашъ адресъ на U 113 an das
Annoncen-Bureau des Merkur
in Mannheim, Meerfeldstrasse 44.
(211) 50—1.

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

(Тифлисъ, Сололаки, Лермонтовская ул. № 9)

Առևտրական կուրսերի նպատակն է մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողներն ստանում են ատեստատներ։

Ասանդների առարկաները սրանք են. 1) Առևտրական Տնտեսութիւն 2) Առևտրական Թուաբանութիւն 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն հատրիչի վրայ 5) Առևտրական լրագիակցութիւն, 6) Առևտրական և մասրհակի կանոնագրութիւն և 7) Դեղագրութիւն (վատ ձեռքի почеркъ—ուղղելը)։

Ուսումն սկսուելու է սեպտեմբերի 15-ից։ Ընդունելութիւնները սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 12-ը և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում. Սոլոլակում, Ալէքսանդր Փրիկոնովի տանը № 9, Լերմոնտովսկայա փողոցում։ Ծրագիրն ու կանոնները կարելի է ստանալ ԶՐԻԱՊԵՍ կուրսեր հիմնողի տանը։ Օտարաքաղաքացիք դիմում են՝ Въ Тифлисъ, С. П. Мануэльяну.

Ձրի (1ուսումն ցանկացողներին գրող մեքենայի վրայ։ Պարապմունք 88) նները կուրսերում լինում են ամեն օր։ 25—11

Ղօշաւանքի «ՏԱՅԼԱՐ» անուանուած 609 դիւտատին վարելահողերը և արօտատեղերը կապալով տալու համար ամսիս 7-ին նշանակուած աճուրդը և 9-ին կրկնաճուրդը չկայանալու պատճառով, Կարսի Հայոց Հոգևոր Կառավարութեան Ատեանում նշանակուած է առաջիկայ Օգոստոսի 26-ին, առաւօտեան ժամը 12-ին նոր ԱՃՈՒՐԴ և 28-ին ԿՐԿՆԱՃՈՒՐԴ, նոյն հողերը կապալով տալու համար։ Յանկացողները պայմանների մասին կարող են դիմել Ատենիս ամենայն օր։
Անդամ Հոգևոր Կառավարութեան՝ Մինաս աւագ քահանայ Տէր-
(214) Պետրոսեան 9—1

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆԻՑ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Երկու սեռի անձանց համար

(Баку, Прачешная, домъ Теръ Ованесова)

Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին մասնագիտական-առևտրական կրթութիւն եւ պատրաստել հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։

Կուրսերում ասւոիզում են՝ 1) Առևտրական թուաբանութիւն և թուաբանութիւն հատրիչի վրայ 2) Հաշուապահութիւն տրպիւնաբերական գործարանական, առևտրական և բանկային 3) Առևտրական թղթակցութիւն 4) Առևտրական տետեսագիտութիւն 5) Առևտրական և մասրհակային օրէնքներ. 6) դեղագրութիւն և արագագրութիւն (ուղղումն ձեռագրի). 7) Ուսուցման վրայ մերեեայի վրայ։

Ուսումն սկսուելու է սեպտեմբերի 20-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից ամենուն օր կատարւում առաւօտեան ժամը 9-ից մինչև 12-ը և երեկոյեան 4-ից մինչև 7 ժամը։

Կուրսերի կանոնագրութիւնը (уставъ) և մանրամասն ծրագիրը (программа)—տրւում և ուղարկւում են անվճար։ Օտարաքաղաքացիները դիմում են Баку, Управителю комъ-
208) мерческихъ курсовъ А. И. Теръ-Каларозу 30—5